Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ն. Գետաշենի Ա. Եղիզարյանի անվ. թիվ 2 միջն. դպրոց

Թեմա՝ Կրտսեր դպրոցականի մոտ համագործակցության ձևավորման մեթոդներն ու եղանակները

Վերապատրաստող, մենթոր՝ Սեդրակյան Մարիամ

Ուսուցիչ՝ Մկրտչյան Անահիտ

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն
Գլուխ 1. Համագործակցային ուսուցում
Գլուխ 2. Խաղային տեխնոլոգիան որպես համագործակցային ուսուցման բաղադրիչ
Գլուխ 3. Խմբային աշխատանքը որպես համագործակից. ուսուցման մեթոդ և դրա կազմակերպման առանձնահատկությունները:
Եզրակացություն
Օգտագործված գրականություն

Ներածություն

Համագործակցային ուսուցում, մեթոդներ, հնարներ հասկացությունները վերջին ժամանակների ամենատարածված եզրույթներից են, ինչի կարևորությունը արդեն կրթական գործընթացի կազմակերպման գործում նկատելի է: Համագործակցությունը մի քանի սովորողի խմբային (թիմային) աշխատանքի և արդյունքի հասնելու նպատակն է, մեթոդը՝ ելք, ճանապարհ, ուղի, որտեղ սովորողները միասին պետք է ընտրեն ամենալավագույնն ու արդյունավետ ուղին այդ նպատակին հասնելու համար: Այս դեպքում շատ կարևոր է միմյանց նկատմամբ համագործակցող թիմը ցուցաբերի հարգանք, վերաբերմունք և գնահատեն միմյանց մասնակցությունը: Կրտսեր դպրոցական տարիքում գլխավոր նպատակը սովորողին զինելն է նորանոր գիտելիքներով, ունակություններով, կարողություններով, հմտությունների ձեռքբերման ինքնուրույնությամբ, ինչն էլ նպաստում է նրանց մետաճանաչողության, շփման զարգազմանը, արժեհամակարգի ձևավորմանը: Համագործակցային ուսուցման ժամանակ ուսուցչից պահանջվում է ճիշտ պատկերացումներ, մոտեցումներ՝ աշխատանքը լիակատար նպատակին հասցնելու: Հմագործակցային ուսուցման կազմակերպման մեթոդներն ու հնարները բազմազան են և այդ բազմազանության մեջ շատ կարևոր է կատարել ճիշտ ընտրություն՝ ըստ սովորողների: Կարևոր են աշխատաժամանակը, վարժությունների տեսակները, դասեր տեսակները, բովանդակությունը և փոխկապվածության տեսակները:

Գլուխ 1 Համագործակցային տեխնոլոգիա

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հան-դուժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համա-գործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
4. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչևաշխատանքի ավարտը,խոսողին հետևելը,առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:
5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,

2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտագործվող նյութերը նախապատրաստելու համար:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

Համագործակցային ուսուցման հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Համագործակցային ուսուցման մեթոդներ.

<u>Աշակերտների թիմային առաջադիմություն</u>

1. Խճանկար
2. Շրջագայություն պատկերասրահում
3. Երեք բանալի և մեկ կողպեք
4. Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է:Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից:

Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում:

Սա «Խճանկար» մեթոդի տարրատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք:

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու,գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթարման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

Գլուխ 2 Խաղային տեխնոլոգիա

Արևելյան իմաստությունն ասում է. <<Տու՛ր մարդուն մի ձուկ, և նա կուշտ կլինի մեկ օր:Սովորեցրու՛ մարդուն ձուկ բռնել, և նա կուշտ կլինի ամբողջ կյանքում>>: Ցանկացած մանկավարժական տեխնոլոգիա պարունակում է միջոցներ, որոնցով ակտիվացվում և ինտենսիվանում են սովորողների գործունեությունները, սակայն կան տեխնոլոգիաներ , որոնց այդ միջոցները ներկայանում են որպես հիմնական գաղափարի արտահայտիչներ և արդյունավետության երաշխավորներ: Այսպիսիների շարքին են դասվում կանխող-հեռանկարային /Լիսենկովային/, խաղային, պրոբլեմային ծրագրավորված անհատական և այլ տեխնոլոգիաները: Այս ուսումնասիրության մեջ փորձել ենք ներկայացնել խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների յուրահատկությունները, քանի որ արդիականության պահանջներից ելնելով՝ այսօր դրանք մեծ պահանջարկ են վայելում , ուսուցման գործընթացւ դարձնում են առավել ակտիվ , արդյունավետ ու հետաքրքիր: Ուսուցման պրակտիկայում հատկապես վերջին տասնամյակների լայնորեն կիրառվում են այնպիսի տեխնոլոգիաներ, որոնց հիմքում ընկած է խաղային մոդելավորումը: Այս տեխնոլոգիաներն առանձնանում են իրենց բազմազանությամբ և արդյունավետությամբ և

մեծ պահանջարկ են վայելում մեր ժամանակներում: Մանկավարժական ինտերակտիվ խաղային տեխնոլոգիաների ուսումնասիրությամբ զբաղվել են Ա. Պ. Գուրևիչը, Ս. Ա. Մուխինան, Ա. Ա. Սոլովյովան և այլք: Խաղային ուսուցումը ենթադրում է տարբեր հիմնախնդիրների լուծումներ՝ կապված մասնագիտական գործունեության, մարդկային փոխհարաբերությունների, անձնական դժվարությունների հետ: Խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների հնարավորությունները բավական լայն են:

ա. Դրանք թույլ են տալիս ընդգրկել հիմնախնդիրների լայն ասպեկտը:

բ. Համապատասխանում են գործունեության տրամաբանությանը:

գ.Նպաստում են ուսումնական գործընթացի մասնակիցների՝ առավել մեծ թվով ընդգրկմանը, նրանց մղում են հանպատրաստից ակտիվության:

դ.Ավելի հեշտությամբ են հաղթահարվում կարծրատիպերը, շտկվում է ինքնագնահատականը:

ե.Հնարավորություն են ստեղծում համակողմանի վերլուծություններ, մեկնաբանություններ կատարելու և ստացված արդյունքները իմաստավորվելու:

զ. Նպաստում են անձի բոլոր որակների՝ անհատական դրական և բացասական ընդունակոըթյունների արտահայտման և այլն:

Բացի այդ, խաղային տեխնոլոգիաների նպատակները համաձայնվում են սովորողների պրակտիկ պահաջմունքներին:Խաղը ՝ զուգակցված աշխատանքի և ուսուցման հետ, ոչ միայն երեխաների, այլ չափահասների գործունեության որոշակի տեսակ է: Գուրևիչը կարծում է, թե խաղի մեջ առարկայանում են իրավիճակներն ու իրադրությունները, գործունեության որոշակի ձևը, հասարակական փորձը, իսկ արդյունքում կատարելագործվում է սեփական վարքագծի վերահսկողությունը: Կյանքում խաղային գործունեությունը կատարում է մի շարք գործառություններ՝ զվարճալի հաճույք է պատճառում, ոգևորում, հետաքրքրություն առաջացնում, ինքնահաստատման , թերապևտիկ (խաղային դժվարությունների հաղթահարումը, որոնք համընկնում են կենսական դժվարություններին),կանխատեսող (խաղի գործընթացում կարելի է ճանաչել իրեն, ի ցույց դնել սեփական թաքնված ուժերը),-կոռեկցիոն-վերականգնողական /խաղային պրակտիկայում փոխվում են անձնային որակները, տեղի է ունենում անձի սոցիալականացում/: Մուխինան գրում է,որ դախը միշ իրականացվում է ինքնակամորեն, ներառում է մրցակցության տարրեր, մասնակիցնորին հաճույք է պատճառում, օգնում ինքնահաստատվելու: Խաղը՝ որպես ուսուցման մեթոդ և ավագ սերնդի՝ հաջորդ սերնդի փորձի փոխանցման միջոց, կիրառվել է դեռևս հին ժամանակներում: Ժամանակակից դպրոցում խաղային գործունեությունը իրագործվում է հետևյալ դեպքում

–որպես ինքնուրույն տեխնոլոգիա,

-որպես մանկավարժական տեխնոլոգիայի բաղադրիչ,

- որպես դասի կազմակերպման ձև: Խաղային տեխնոլեգիաների տեղն ու դերը ճիշտ արժեքավորելու համար ուսուցիչները պիտի քաջ գիտակցեն խաղի գործառությները: Դիդակտիկական խաղերի արդյունավետությունը առաջին հերթին կախված է նրանց օգտագործման սիստեմատիկությունից, ապա նաև՝ խաղային ծրագրերի նպատակաուղվածությունից ու դրանք դիդակտիկական վարժություններին զուգակցելու հմտությունից: Երեխաները և ընդհանրապես սովորողները հեշտությանբ են ներգրավում խաղային գործունեության ոլորտ, և ինչքան այն բազմազան է, այնքան ավելի գրավիչ է դառնում:Խաղային գործունեության մեջ մտնում են խաղեր և վարժություններ, որոնք զարգացնում են առարկաների բնույթը, բնութագրիչ հատկանիշները բացահայտելու, դրանք իրար հետ համեմատելու և համադրելու կարողությունները: Խաղերը նաև թույլ են տալիս տարբերել իրական երևույթները անիրականից, զարգացնում են ինքնատիրապետումը, ռեակցիայի արագությունը, երաժշտական լսողությունը և այլն: Ավելի փոքր տարիքում երեխաները խաղերի օգնությամբ ստեղծում են իրենց աշխարհը՝ առաջնորդվելով վառ երևակայությամբ:Ավագ դպրոցական տարիքում խաղերը նպատակաուղղված են անջի ինքնահաստատմանն ու կայունացմանը, արժանիքների բացահայտմանը: Բոլոր գործնական խաղերի տեխնոլոգիան կազմված է մի քանի փուլերից.

1.Նախապատրաստական: Այս փուլի մեջ մտնում է սցենարի մշակումը, պարապմունքի նպատակի որոշումը, առաջադրված խնդրի հիմնավորումը, գործնական խաղի պլանի մշակումը, գործոզ անձանց բնութագրումը և այլն:

2.Մուտքի խաղի մեջ: Հայտարարվում են մասնակիցների անունները, խաղի պայմանները, փորձաքննողաների անունները, գլխավոր նպատակը, հիմնավորվում է իրադրությունների ընտրությունը:Առաջադրվում են նաև չափերոշիչները, կանոնները և դրույթները:

3. Խաղի գործընթացը: Խաղն սկսվելուն պես ոչ ոք իրավունք չունի միջամտելու կամ որևէ բան փոխելու: Միայն խաղավարն է իրավասու մասնակիցների գործողությունները վերահսկելու և կարգավորելու, եթե նրանք հեռանում են գլխավոր նպատակից կամ շեղվում են խաղի կանոններից: Խաղի արդյունքների վերլուծության և գնահատում: Արտահայտվում են փորձաքննիչները, կարծիքներ փոխանակում, իսկ խաղի մասնակիցները կարող են պաշտպանել և պարզաբանել իրենց գործողությունները: Վերջնական փուլում ուսուցիչը նշվում է ձեռքբերումների ու խաղի արդյունքների և թույլ տրված սխալների մասին և ամփոփում պարապմունքի վերջնական արդյունքը: Գոյություն ունեն խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների մի քանի տեսակներ՝ գործնական, նմանակող/իմիտացիոն/,գործառական և դերային: Գործնական խաղերը դպրոց են մուտք գործել մեծահասակների կյանքից: Դրանք կիրառվում են նոր նյութի յուրացման գործընթացում և զարգացնում են ստեղծագործական կարողությունները: Խաղը հնարավորություն է ընձեռում հասկանալու և ուսումնասիրելու ուսումնական նյութը տարբեր տեսանկյուններից: Նմանակող/իմիտացիոն/ խաղի ժամանակ

նմանակում են որևէ կազմակերպության կամ արտադրության գործունեությունը: Կարող են նմանակվել դեպքերը, մարդկանց գործունեության կոնկրետ տեսակները / գործնական հանդիպում, պլանի քննարկում, զրույցի անցկացում և այլն/: Գործառական /օպերացիոն/ խաղերը օգնում են մշակելու կոնկրետ սպեցիֆիկ գործառություններ իրականացնելու, օրինակ՝ հասարակական ելույթներ ունենալու, քարոզչություն իրականացնելու, հմտությունները, շարադրություններ գրելու կարողությունները և այլն: Այսպիսի խաղերը կազմակերպվում են իրականին մոտ պայմաններում: Դերային խաղերում մշակվում են վարքագծի կանոնները, կոնկրետ անձի գործառույթներն ու պարտականությունները կատարելու կարողությունները: Այսպիսի խաղերի համար մշակվում եմ սցենարներ, առանձնացվում են յուրաքանչյուր մասնակցի դերերը: Մասնագիտական պատրաստվածության մեջ իրենց արդյունավետությամբ առանձնանում են նաև հաղորդակցական /կոմունիկատիվ/ տարբեր թրեյնինգները, որոնց հիմնական նպատակն է՝ սովորողների վերբալ և ոչ վերբալ կոմպետենցիաների, ինտերակտիվ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացումը: Այս թրեյնինգներում հաղորդակցման կազմակերպումը վերածվում է վերականգնողական ներգործության գլխավոր միջոցի: Այսպիսի թրեյնինգներից է <<Տեսաթրեյնինգը>> /видиотренинг/: Այս անունն են կրում այն թրեյնինգները, որ հիմնվում են տեսագրությունների վրա: ՈՒսումնական նպատակներով տեսագրություններն օգտագործվում են երկու եղանակով 1. պատրաստի տեսանյութերի ցուցադրում, 2. տեսագրության օգտագործումը խաղային առաջադրանքի կատարման ընթացքում, դրա ցուցադրումն ու քննարկումը: Տեսաթրեյնինգի ուսումնական նպատակը կառուցողական վարքագծի և հաղորդակցման հմտությունների զարգացումն է: Պատրաստի տեսանյութերի դիտումը նպաստում է հետևյալ խնդիրների լուծմանը. տեղեկացվածության, հիմնակնդիրների առաջքաշման, կարողությունների լուծմանը,տեղեկացվածության, հիմնախնդիրների առաջքաշման, կարողությունների ու հմտությունների զարգացման:

Գլուխ 3 Խմբային աշխատանքը որպես համագործակցային ուսուցման մեթոդ և դրա կազմակերպման առանձնահատկությունները:

Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել , համատեղ խնդիրներ լուծել: Ուսուցման այս ձևը ժողովրդավարական հասարակության ձևավորման կարևոր նախապայմաններից է: Աշխատելով տարբեր ընդունակություններ, հմտություններ, բնավորության գծեր ունեցող դասընկերների հետ, աշակերտները զարգացնում են ժողովրդավարական հասարակությանը բնորոշ բազմազան իրադարցություններում արդյունավետ գործելու հմտություններ և որակներ: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտների ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի , լսողի պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտները ավելի շատ են սովորում, երբ ակտիվ մասնակցում են գործընթացին:

Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով , որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտակ, անհատա հարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարան/մեծ/խմբի հետ, ապա աշակերտներն արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են:

Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

. Զարգացնում է խնդիրներ լուծելու կարողությունը,

. Ձևավորում է հաղորդակցման հմտություն,

. Աշակերտները սովորում են միմյանց,

. Զարգացնում է աշակերտի պատասխանատվության զգացումը միմյանց հաշվետու լինելու հատկությունը խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցը ,

. Խթանում է թիմային աշխատանքը,

. Ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,

. Քննարկումների միջոցով ամրապնդում է աշակերտների համոզմունքները,

. Ընձեռնու է ակտիվ մասնակցության ինքնադրսևորման հնարավորություն.

Փոքր խմբերը կարելի է ձևավորել հետևյալ նպատակներով՝

1. Ուսումնական նյութի յուրացման ամրապնդելու. աշակերտները ամրապնդում են ուսուցանված նյութը ստուգողական աշխատանքից, քննությունից առաջ:
2. Պրոբլեմներ լուծելու. Աշակերտները փորձում են առաջադրել կոնկրետ պրոբլեմի լուծման իրենց տարբերակը:
3. Հետազոտելու. Աշակերտները մանրակրկիտ հետազոտում են որոշակի պրոբլեմ կատարելով աշխատանքի բաժանում խմբի ներսում:
4. Փորձագիտական աշխատանք կատարելու. Աշակերտները իրենց դասաընկերների հետ քննարկում են թեմաներ, որոնցում իրենք մասնագիտացել են :
5. Դերախաղի. Աշակերտները փորձում և ամբողջ դասարանին են ներկայացնում գրական , պատմական կամ գիտական նշանակալից իրադարձություն՝ խաղարկային ժանրով:

Խմբերի տեսակները

Խմբերի երկու հիմնական տեսակներ կան **համասեռ և տարասեռ**: Համասեռ խմբերով աշխատելու պարագայում ուսումնական ձեռքբերումների միևնույն մակարդակ ունեցող

աշակերտները աշխատում են իրար հետ: Այս ձևը նպատակահարմար է կիրառել ոչ ֆորմալ, կարճաժամկետ գործունեության համար ստեղծված խմբերի դեպքում: Առավել արդյունավետ է տարասեռ խմբերով աշխատանքը: Այս դեպքում խմբերում աշխատում են ուսումնական հաջողությունների տարբեր մակարդակ ունեցող աշակերտներ: Խմբերը կարելի է ձևավորել նաև պատահականորեն , օրինակ հաշվելու ,նստելու տեղի,ծննդյան ամիսների և այլ գործոնների հիման վրա: Ուսուցիչը կարողէ թղթե երկրաչափական մի քանի պատկերներ դնել սեղանին և աշակերտներին առաջարկել վերցնել դրանցից մեկը: Նույն անման պատկերներ վերցնողները դառնում են նույն խմբի անդամներ. խմբերը կարելի է ձևավորել նաև սովորողների հետաքրքրությունների հիման վրա: Ուսուցիչն առաջարկում է մի քանի թեմա կամ խնդիր: Աշակերտներն խմբավորվում են իրենց հետաքրքրող թեմայի շուրջ :

Փորձը ցույց է տալիս, որ առավել արդյունավետ է տարասեռ խմբերի ձևավորումը: Եթե խմբում միայն ուժեղներ կամ թույլեր են,ապա դրանցից առաջինները ավելի կուժեղանան,իսկ եկրորդները ավելի կթուլանան: Անհրաժեշտ է հաճախակի փոխել խմբերի կազմը, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան տարբեր միջավայրերում աշխատելու :

Խմբերի մեծությունը

Խմբերի տեսակը սահմանելուց հետո ուսուցիչը պետք է որոշի խմբի մեծությունը:Փոքր խմբի չափը կարող էտատանվել 3-7-ի միջև: Առավել արդյունավետ է համարվում4հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծա ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Ըստ էության 4 հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և,միաժամանակ, ձևավորում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կապված է դասի նպատակից և ընտրված մեթոդից :

Խմբերի աշխատանքի տևողությունը

Ըստ տևողության փոքր խմբերը լինումեն ֆորմալ, ոչ ֆորմալ և երկարաժամկետ: Ֆորմալ համագործակցային խմբերը գործում են մեկ դասաժամից մինչև մի քանի շաբաթ ժամկետներում:

Ոչ ֆորմալ համագործակցային խմբերը ձևավորվում են մի վարժության մի քնաի րոպեանոց քննարկման նպատակով:

Երկարաժամկետ խմբերը կայուն են և գործում են առնվազն մեկ կիսամյակ: Դրանք նախագծող հետազոտություն, համայնքային ծառայություն իրականացնող խմբեր են, որոնք աշխատում են որևէ աշխատատար խնդրի վրա: Կարևոր է, որպեսզի այդ խմբերը լինեն տարասեռ: Այդպիսով, ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր կարելի է ձևավորել դասապրոցեսում, իսկ երկարաժամկետ խմբերը արտադասարանական գործունեության նպատակով :

Ընթացքը

1. Դասարանը բաժանել 1-7 հոգանոց խմբերի։

2. Հանգամանալից ներկայացնել առաջադրանքը։

3. Հանձնարարել խմբերի կատարեոլ աշխատանքի բաժանում ընտրելով

Ներխմբային քննարկումները վարող, դրանք գրանցող և խմբերի տեսակետները ամբողջ դասարանին ներկայացնող աշակերտներ։

4. Պարզել արդյոք խմբերը ճիշտ են հասկացել առաջադրանքը։ Այդ նպատակով

մոտենալ բոլոր խմբերին։

5. Խմբերի համար սահմանել քննարկումների հատկացվող որոշակի ժամանակ ։

6. Յուրաքանչյուր խմբի հնարավորություն տալու ամփոփիչ ձևով ներկայացնելուն քննարկումների արդյունքները։ Արդյունքները սովորաբար ներկայացնում է խմբի խոսնակը,բայց կարող են ներկայացնել նաև խմբի մի քանի անդամներ կամ ամբողջ խումբը։

7. Փորձել ընդհանրություններ գտնել խմբերի տեսակետներում։

8. Աշակերտներին հարցնել, թե ինչ սովորեցին և ինչպես կօգտագործեն իրենց սովորածը ։

Խորհուրդներ ուսուցիչներին

- Առաջադրանքը պետք է հստակ ու պարզ ներկայացվի։
- Խումբը պետք է տեղեկացված լինի ժամանակային սահմանափակումներին ։
- Խմբի և դասարանի աշակերտները պետք է միմյանց լսեն, եթե նույնիսկ համաձայն չեն իրար հետ ։
- Խմբային քննարկումների ժամանակ ոչ ոք չպետք է իշխի մյուսների նկատմամբ ։
- Խրախուսել մասնակցությունը և հարցերը ։

Փոքր խմբերով աշխատանքը ինքնանպատակ չէ։ Այն համագործակցային ուսուցման հասնելու ճանապարհին։ Կրթության հայտնի տեսաբաններ Ժան Պիաժեն, Լև Վիգոտսկին և ուրիշներ, պնդում են, որ երեխայի մտավոր զարգացման գործում սոցիալական փոխազդեցությունն ու միջանձնային հաղորդակցությունը կարևոր գործոններ են։ Ուսուչցչի համար շատ կարևոր է հասկանալ, որ ոչ միշտ են փոքր խմբերը համագործակցային։ Համագործակցության աստիճանից կախված դասապրոցեսում հնարավոր են փոքր խմբերով աշխատանքի հետևյալ մակարդակները.

1. <u>Կեղծ խմբեր</u>։ Թեև աշակերտները աշխատում են խմբերով,բայց առանձնակի շահագրգռվածություն չեն դրսևորում։ Նրանք մտածում են , որ ուսուցիչը իրենց գնահատելու է անհատական աշխատանքի համար։ Արտաքուստ աշակերտները

քննարկում են, բայց խորքում նրանք մրցակցում են։Նրանք միմյանցից քողարկում են գիտելիքները, իրար շփոթեցնում են ։

2.<u>Ավանդական խմբեր</u>։ Աշակերտները բաժանված են խմբերի, բայց առաջադրանքը տրված է այնպես, որ համատեղ աշխատանքի կարիք չի զգացվում։ Աշակերտները աշխատում են անհատական, առանց մտքեր փոխանակելու, միմյանց հետ համագործակցելու։

3. Համագործակցային խմբեր ։ Աշակերտները հասկանում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից ։ Նման խմբերին բնորոշ է թիմային աշխատանքի ոգին,ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնը անելու ցանկությանը փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալական փոխազդեցության հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու ու վերանայելու կարողությունը ։

4. <u>Բարձրակարգ համագործակցային խումբ</u>։ Այս խումբն ունի նախորդ բոլոր հատկանիշները։ Վերոնշյալից զատ բարձրակարգ համագործակցային խմբի անդամները աջակցում են յուրաքանչյուրի անհատական առաջընթացին,գործումեն փոխադարձ նվիրվածության սկզբունքով։ Հասկանալի է, որ իրականում նման խմբեր հազվադեպեն լինում։

Այսպիսով ոչ բոլոր խմբերը կարելի է համարել համագործակցային։ Աշակերտների մի սենյակումնստեցնել, մի խմբում ընդգրկելը, նույն առաջադրանք տալը դեռևս բավարար չեն համագործակցային ուսուցման մասին խոսելու համար ։

Ուսուցիչները պետք է նկատի ունենան այն հանգամանքը, որ փոքր խմբերով աշխատանքներ կիրառելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հնարավորությունը նվազ է։ Բայց պետք է հետևողականորեն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը, որպեսզի արդարացված ու արդյունավետ լինի փոքր խմբերով աշխատանքը։

Ինչ պետք է անի ուսուցիչը համագործակցային ուսուցման հասնելու համար

1.Անհրաժեշտ է դասագրքի նյութը, դասպլանները, դասապրոցեսը, առաջադրանքները կառուցել այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան ։

2. Ուսումնական նյութը , ուսումնական մեթոդները համապատասխանեցնել կոնկրետ առարկայի, կոնկրետ դասարանի կարիքներին։

3. Հաշվի առնելով այն խնդիրները , որ կարող են առաջացնել առանձին աշակերտների միջև փորձելով միջամտել, կանխել հնարավոր է ձախողումներ, կոնֆլիկտներ։

4.Հաշվի առնել խմբային և անհատական պատասխանատվությունը։ Խմբային աշխատանքի պարագայում պետք է հաշվի առնել ինչպես ամբողջ խմբի աշխատանքի

արդյունքը, այնպես էլ խմբի յուրաքանչյուր անդամի ներդրումը։ Վերջինս հաշվի չառնելու դեպքում, որոշ սովորողներ պարբերաբար <<գլուխ կպահեն>> ինչի արդյունքում համագործակցային ուսուցումը կձախողվի։

Եզրակացություն

Այսպիսով՝ մանկավարժամասնագիտական վերլուծությունից հանգում ենք այն եզրակացությանը, որ կրտսեր դպրոցական տարիքում կիրառելով համագործակցային ուսուցումը, դրա տարբեր եղանակներն ու հնարները, սովորողների ուսուցման գործընթացը առավել արդյունավետ է դառնում: Այս ընթացքում զարգանում է դպրոցականի մետաճանաչողությունը, նկարագրական բառապաշարը (խոսքը) վերլուծելու, հաղորդակցվելու, ճանաչելու, ներկայացնելու կարողությունները: Համագործակցային ուսուցման ժամանակ խմբի յուրաքանչյուր անդամ պարտադիր ներգրավված է լինում ուսուցման և աշխատանքի կատարման մեջ, իսկ նոր բացահայտումները, գիտելիքների մշակումը, խոսքի կառուցումը, մտահորիզոնի զարգացումը յուրացվում է նրանց միջոցով, քանի որ հենց իրենք են համարվում համագործակցողներն ու գիտելիքների հարուստ պաշար ձեռք բերողները: Կարող ենք հավաստիացնել, որ այս գործընթացը նպաստում է ներառականության բարձրացմանը, քանի որ այս դեպքում դասարանը լիովին մասնակից է լինում: Համագործակցային ուսուցման միջոցով ոչ միայն ձեռք է բերվում ակադեմիական գիտելիքները, այլ նաև սովորողների մոտ պատկեացումներ են ձևավորվում մյուս առարկաների հետ ինտեգրման վերաբերյալ ինչպես նաև այնպիսի արժեհամակարգային տարրեր, ինչպիսիք են՝

Ա)ազնվությունը

Բ)ընկերասիրությունը

Գ)համերաշխությունը

Դ)անկողմնակալությունը

Ե)փոխադարձ հարգանքը

Զ)ներողամտությունը ։

Ինչպես նաև օրինակ են ծառայում սպորտային թիմային խաղերը, որոնց ժամանակ հաղթանակները, որոնք կարող են հիմք ծառայել վերը նշված արժեհամակարգին, առավել ցայտուն են երևում,երբ մրցելիս հաղթում է մեկ խումբը, պարտվում է մյուսը, սակայն խաղալիս, հաղթելիս և պարտվելիս կարողանան իրար զիջել, ներել, հաշտվել, բնական ընդունել այդ ամենը: Այս բոլոր գործոնները սովորողներին նախապատրաստում է սոցիալական միջավայրում, որպես գրագետ անձ, որի հիմքը դրվում է հենց դպրոցական տարիքից, դպրոցից ստացած կրթությունից: Առաջարկվում է համագործակցային ուսուցումը դպրոցում դարձնել գիտելիքների, կարողություններ նորանոր հաջողությունների գլխավոր տարբերակ:

Գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական կրթակարգ, միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Անտարես, Երևան 2004թ:
2. Գրավոր գործնական պարապմունք ինքնարտահայտումիցմինչև գրավոր փաստարկ, (ՈՒղեցույց VII) Ջինի Լ. Սթիլ:
3. Դասի պլանավորում և գնահատում (ՈՒղեցույց VII) Ջինի Լ. Սթիլ:
4. Համագործակցային ուսումնառություն (ՈՒղեցույց V) Ջինի Լ. Սթիլ: